

# Աշխարհագրության մարզային փուլ - 2022 թ.

Հարցաթերթ – 11-12-րդ դասարաններ - տևողությունը՝ 120 րոպե

/գնահատման քայլը՝ 0.25 միավոր /

1. Քանի՞ օրում կարելի է կատարել մեկ լրիվ պտույտ հասարակածով, եթե շարժվենք 7 կմ/ժամ միջին արագությամբ (պատասխանը հիմնավորել հաշվարկով).....2 միավոր
2. Մաքսաուլի տարիքը կարելի՞ է արդյոք որոշել տարեկան օդակներով: Բացատրել.....1 միավոր
3. Որոշել կլիմայական գոտին (նշել նաև կիսագունդը), որտեղ հուլիսի միջին ջերմաստիճանը  $+20 +23^{\circ} \text{C}$  է, իսկ հունվարինը՝  $+30^{\circ}$ : Գոտում տարեկան տեղումների քանակը մոտ 1000 մմ է, որը հիմնականում թափվում է դեկտեմբեր – փետրվար ամիսներին.....1 միավոր
4. Որքա՞ն բնակիչ կունենա 5 մլն. բնակչություն ունեցող երկիրը 1 տարի անց, եթե բնական աճը կազմել է 1.8 %, և այդ ընթացքում ներգաղթը կազմել է երկրի բնակչության 2 %-ը, իսկ արտագաղթը՝ բնակչության 1 %-ը (պատասխանը հիմնավորել հաշվարկով).....2 միավոր
5. Դուրս գրել այն քաղաքները, որոնք մտնում են Բոսվաշ մեգալոպոլիսի մեջ.....1 միավոր  
Նյու-Յորք, Չիկագո, Փիթսբուրգ, Սիեթլ, Նոր Օռլեան, Ֆիլադելֆիա, Բոստոն, Բալթիմոր, Միլուոկի, Ատլանտա, Դետրոյթ, Բուֆալո
6. Հնարավո՞ր է արդյոք, որ.....2 միավոր
  - ա) Գյուղատնտեսության զարգացած ապրանքային տիպ ունեցող երկրներում տիրապետի գյուղատնտեսության վարման էքստենսիվ եղանակը: Ինչու՞ :
  - բ) Հյուսիսային կիսագնդում, կեսօրին, առարկայի ստվերը ուղղված լինի դեպի հարավ: Եթե այո, ապա՝ որտե՞ղ և ինչու՞ :
7. Որո՞նք են պարենային հիմնախնդրի լուծման ուղիները (թվարկե՛ք դրանցից 8-ը).....2 միավոր
8. Բնական ռեսուրսների վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.....1,5 միավոր
  1. Բնական պայմաններ են կոչվում բնության այն տարրերը, որոնք մարդկանց կողմից օգտագործվում են կամ կարող են օգտագործվել արտադրության ու սպառման համար:
  2. Ռեսուրսաապահովվածությունը բնական ռեսուրսների քանակի և օգտագործման չափերի հարաբերությունն է:
  3. Բնական ռեսուրսների էկոլոգիական գնահատման ժամանակ հաշվի են առնվում արտադրության մեջ դրանց օգտագործման նպատակահարմարությունն ու հնարավորությունը:
  4. Բնական ռեսուրսները խմբավորվում են ըստ որոշ հատկանիշների՝ ծագման, վերականգնման հատկության, որակի:
  5. Մետաղային և ոչ մետաղային հանքային ռեսուրսները դասվում են վերականգնվող ռեսուրսների թվին:
  6. Չսպառվող ռեսուրսների խմբին են դասվում հողային, անտառային և ջրային ռեսուրսները:

9. Մթնոլորտում ջրային գոլորշիների վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.....1,5 միավոր
1. Օդի բացարձակ խոնավությունն արտահայտվում է տոկոսներով:
  2. Որքան բարձր է օդի ջերմաստիճանը, այնքան քիչ ջրային գոլորշիներ են անհրաժեշտ այն հագեցնելու համար:
  3. Ձմռանն ամպամած օրերին, սովորաբար, գիշերն ավելի տաք է, քան պարզկա օրերին:
  4. Շերտավոր ամպերն առաջացնում են տեղատարափ անձրև և կարկուտ:
  5. Ցողը բույսերի և այլ առարկաների վրա սառցե ասեղիկների՝ ձյան նմանվող նստվածքն է:
  6. Մթնոլորտի երկրամերձ շերտում ջրային մանրագույն կաթիլների կուտակումը կոչվում է մառախուղ:
10. Գրել այն լեռնագագաթների համարները, որոնք ունեն 4000 – 5000 մ բացարձակ բարձրություն.....1 միավոր
- |                |            |               |                       |
|----------------|------------|---------------|-----------------------|
| 1. Կիլիմանջարո | 2. Մոնբլան | 3. Ակոնկագուա | 4. Կլյուչևսկայա Մոսկա |
| 5. Վինսոն      | 6. Սիփան   | 7. Դեմավենդ   | 8. Ջիլո               |
11. Գրել միագործառնական քաղաքների համարները.....1 միավոր
- |              |             |            |            |
|--------------|-------------|------------|------------|
| 1. Մեծամոր   | 2. Իջևան    | 3. Հրազդան | 4. Արմավիր |
| 5. Նոր Հաճրն | 6. Ծաղկաձոր | 7. Ախթալա  | 8. Կապան   |
12. Տրված տրանսպորտի տեսակները դասավորել համաշխարհային ուղևորափոխադրումների կառուցվածքում ունեցած կշռի նվազման կարգով .....1 միավոր
- |             |                  |                 |            |
|-------------|------------------|-----------------|------------|
| 1. ավիացիոն | 2. ավտոմոբիլային | 3. երկաթուղային | 4. ծովային |
|-------------|------------------|-----------------|------------|
13. Գետը սկիզբ է առնում 235 մ բարձրությունից և թափվում է օվկիանոս: Գետի լայնությունը 9 մետր է, միջին խորությունը՝ 0,8 մետր, իսկ երկարությունը՝ 940 կմ: Գետի մեջ գցված խցանը 30 մետր տարածությունն անցնում է 1 րոպեում: Որոշել.....2 միավոր
- ա) գետի անկումը,                      բ) թեքությունը,  
գ) արագությունը,                    դ) ծախսը:
14. Տրված ջրամբարներից որո՞նք են գտնվում Սյունիքի մարզում.....1 միավոր
- Ապարանի, Մանթաշի, Անգեղակոթի, Հերիերի, Տոլորսի, Կառնուտի, Կեչուտի, Սպանդարյանի, Ազատի, Ջողազի, Շամբի, Աղբյուրակի:

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝

Ա. Թ. Գրիգորյան